Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«...Ապրեցան ի բերանոյ սրոյ. զաւրացան ի տկարութենէ. եղեն զօրաւորք ի պատերազմի. առին զբանակս օտարաց»:

(Եբր. ԺԱ 34)

Աստվածակառույց մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհության աղոթքով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ի Հայաստան, յԱրցախ և ի Սփյուռս աշխարհի սիրեցյալ մեր ժողովրդին՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի 1918 թ. մայիսյան հերոսամարտերի 90-ամյա հոբելյանի առիթով:

Տոնում ենք մեր ժողովրդի պանծալի հաղթանակը հայրենի հողի վրա ազատ ապ-

րելու իր իրավունքին, իր գոյությանը սպառնացող բռնության հանդեպ, հաղթանակը՝ մեր ժողովրդի հավատավոր հոգու և խիզախումի: Երախտազգաց հոգով այսօր ոգեկոչում ենք անմահ հիշատակը անվարան նվիրումով մարտի ելած ու հաղթանակած մեր քաջարի զինվորների և զորահրամանատարների, հոգևորականների և աշխարհազորայինների, որ «...ապրեցան ի բերանոյ սրոյ. զաւրացան ի տկարութենէ. եղեն զօրաւորք ի պատերազմի. առին զբանակս օտարաց»:

Արդար էր մեր ժողովրդի պայքարը: Արևմտյան Հայաստանը հայաթափելուց հետո թուրքական բանակները ներխուժել էին Արևելյան Հայաստան: Օրհասական ժամի ահազանգով հնչում էին Սուրբ Էջմիածնի և բոլոր եկեղեցիների զանգերը՝ երկինք բարձրացնելով աղոթքը Գևորգ Ե Սուրենյանց Հայոց Հայրապետի. «Տէր, օգնէ իմ զաւակներին, որ յաղթեն թշնամուն»: Վերադասավորվում էին հայոց փոքրաթիվ զորամիավորումները, ժողովուրդը շտապում էր համալրել զորագնդերի շարքերը: Հույսը Աստված, ապավինած իր սակավ ուժերին, գերակշռող նվաճողների դեմ կենաց և մահու պայքարի էր գնում մեր ժողովուրդը: Երկյուղ չունեին մահից, մահեր շատ էին տեսել: Մահն էր երկնչում եղեռնահար, տնավեր ժողովրդից, քաղցած, անզեն ժողովրդից, որի հոգին, սակայն, կենսունակ էր արդարության հավատով ու ազատության սիրով, արարման ձգտումով և իր կյանքը կառուցելու անհերթ հույսով:

Ամեն հոգում արձագանքում էին Հայրենիքը փրկելու կոչերը Հայոց Հայրապետի, գեներալներ Մովսես Սիլիկյանի, Թովմաս Նազարբեկյանի: Ամեն հոգում արիություն ոգեշնչող պատգամն էր Գևորգ Ե Հայոց Կաթողիկոսի. «Ասացէք հայ բանակին, թէ ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողնում Սուրբ Էջմիածինը: ... Ինչպէս Մեծ Վարդանը Քրիստոսի անունով յաղթեց Տղմուտի ափին և ընկաւ հերոսաբար, նոյնպէս և դուք այսօր պէտք է յաղթէք: ... մենք ոչ ոք չունենք մեր կողքին, բացի Քրիստոսից, Որը մեր միակ ուժն է և մեզ օրհնում է»: Գոտեպնդված ճշմարտությամբ, հանդերձավորված արդարության զրահով, առած հավատի վահանը, փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծո Խոսքը (հմմտ. Եփես. Զ 14-17)՝ մեր ժողովուրդը Սուրբ Վարդանանց ու Ղևոնդյանց անպարտելի ոգով Ավարայրի սուրը կրկին պարզեց գոյության ու ազատության պայքարում: Մայիսյան տասնօրյա մարտերի արդյունքում փրկվեց Արևելյան Հայաստանը, որի տարածքում այդ հերոսական օրերին ծնունդ առավ Հայաստանի առաջին Հանրապետությունը: Ամենածանր պայմաններում, գրեթե միշտ գտնվելով պատերազմական իրավիճակում, շրջափակման մեջ, Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ երկրի շենացմանը, պետականության կառուցմանը և ունեցավ ձեռքբերումներ, որոնք Հանրապետության կարճատև գոյությունից հետո էլ ծառայեցին մեր ժողովրդին: Հիրավի, անտեղի չեն լինում, անհետ չեն կորչում արդար ջանքերն ու նվիրումը: Աստծո օրհնությամբ ինչը տկար էր, զորավոր դարձավ, ինչը սակավ էր, բազմապատկվեց: Մեր ժողովուրդը վերածնվեց, բարձրացրեց իր նոր կյանքը Հայաստանում և Սփյուռքում, ճանաչվեց աշխարհում իր ձեռքբերումներով, հռչակավոր գիտնականներով, անվանի արվեստագետներով, իր ստեղծագործ, տաղանդաշատ հոգով: Մենք և սերնդեսերունդ Մեր զավակները գնահատանքով և արժանի մեծարումով ենք հիշելու դժվարին իրավիճակում ապրած ու գործած պետական, ռազմական գործիչներին, հոգևորականներին, մտավորականներին, ազգային ազատագրական պայքարի նվիրյալ ֆիդայիներին և փառք ենք մատուցելու ժողովրդին մեր արիասիրտ, որ աղետալի իր ժամանակը դարձրեց հերոսական ու հաղթական և նոր սկիզբը դրեց իր ազգային պետական կյանքի կառուցման: Արդարև, «...Ապրեցան ի բերանոյ սրոյ. զաւրացան ի տկարութենէ. եղեն զօրաւորք ի պատերազմի»:

Սիրելի հավատավոր ժողովուրդ հայոց, այսօր մայիսյան հերոսամարտերի 90-ամյա հոբելյանը մենք տոնում ենք Հայաստանի անկախ պետականությամբ, Արցախի ազատագրությամբ, Հայ Սփյուռքում վերազարթյալ կյանքով և վերազարթյալ հույսերով՝ կամոք և օգնությամբ Աստծո իրագործելու մեր իղձերը, հաղթանակած տեսնելու մեր ժողովրդի արդար իրավունքները:

90 տարի առաջ, այն վճռորոշ օրերին մայիսյան հերոսամարտերը Հայրենիքը փրկելու սխրանք էին, այսօր՝ Հայրենյաց սիրով ապրելու, Հայրենիքով համախմբված մնալու հրավեր: Մայիսյան հերոսամարտերը միաբանության ոգու պատգամ են մեր ժողովրդին: Միասնաբար, եկեղեցասեր ու հայրենասեր ոգով պիտի հաղթահարենք այսօրվա դժվարություններն ու խնդիրները՝ պատմությունը մեզ ուսուցիչ ունենալով, և միշտ առաջնորդվելով մեր ժողովրդի լուսավոր գալիքի տեսիլքով: Արարատի ազատ հայացքի ներքո պիտի ծաղկի մեր Հայրենիքը, հզորանա, բարգավաճի, խաղաղ կյանքի խնդությամբ ապրի աշխարհասփյուռ իր բոլոր զավակների հետ: Այս հավատով, միշտ Աստծո հետ հավատարիմ ընթացքով մեր ջանքերը համախմբենք, մեր նվիրումը զորացնենք՝ հավելելու համար այն հաջողություններն ու հաղթանակները, որ զոհողությունների գնով, անլուր դժվարություններ ու խոչընդոտներ հաղթահարելով ձեռք է բերել մեր ժողովուրդը, և որոնց պարծանքն ու քաջալերությունը միշտ պիտի ուղեկցեն հայոց կյանքին:

Թող անմար լինեն մեր կյանքում հայրենյաց փառքերը, հավատավոր հոգու լույսն ու զորությունը, արդար ու բարի գործերի պարծանքը՝ ի փառս Աստծո, ի պայծառություն մեր Եկեղեցու, ի բարօրություն մեր Հայրենիքի ու ժողովրդի: Թող Բարձրյալի խաղաղության և արդարության շնորհների ներքո դեպի բարեբեր հանգրվաններ առաջնորդվի աշխարհը համայն և մեր Հայրենին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Մայիսի
յամի Տեառն 2008 և ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 469